# I. ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

*Արտաշատ մայրաքաղաքը, որը հսկայական տարածություն էր զբաղեցնում, բացի Խորվիրապի շրջակայքում գտնվող 11 մեծ ու փոքր բլուրներից, փռված է եղել նաև բլուրներից հյուսիս, հյուսիս-արևելք։ Մեծ ու բազմամարդ այդ քաղաքն ունեցել է մի քանի գերեզմանատներ քաղաքի տարածքում և նրանից դուրս։ Քաղաքի թաղամասերում տեղ-տեղ հանդիպում են գերեզմաններ, որոնք գտնվում են երբեմն շենքերի արանքում, պարսպի տակ և այլուր։*

*Առավել ընդարձակ գերեզմանոցները գտնվել են քաղաքի տարածքից դուրս, այժմյան Նոր կյանք և Շիրազ գյուղերի դաշտերում։*

*Նոր կյանք գյուղի դաշտերում (քաղաքից արևելք) գտնվող գերեզմանները շատ վատ էին պահպանվել։ Այստեղ թաղման հիմնական ձևը կարասային էր, բայց եղել են նաև հողահորային դամբարաններ։ Ամբողջ դամբարանադաշտը տեղավորված էր մոխրախառն կպչուն ավազահողի մեջ։ Դամբարանները բավականին խիտ էին ու մակերեսային, և դաշտը բազմիցս հերկելու պատճառով հիմնահողային թաղումները խառնվել էին իրար։ Պեղումների ընթացքում հողաշերտից ի հայտ էին գալիս տարբեր անոթների բեկորներ։ Ավերված և իրար խառնված դամբարաններից հայտնաբերված ուղեկցող նյութերը քննության են առնվում միասին։ «Նոր կյանք»-ի դաշտում մեզ հաջողվեց պեղել մոտ 13 կիսավեր և ամբողջական կարասային թաղումներ, բոլորն էլ շարքային, որոնք ունեին տարբեր դիրք, առանց որոշակի կողմնորոշման (նկ. 1)։*

**Դամբարան № 1:** *Կարասային թաղում։ Ուղղությունը՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք։ Կարասը ամբողջովին ճաքած էր, շրջակայքն ու մեջը ավազախառն ամուր հող. կմախքը շատ վատ էր պահպանված։ Գլխի վրա նույնանման կարասի մի բեկոր էր դրված։ Կարասի և գունազարդ ջրամանի բեկորներ կային նաև դանդի կողքերին ու տակը, տարբեր բարձրությունների վրա։ Հանգուցյալը թաղված է եղել խիստ կուչ եկած, ծնկները ծալած վիճակում, գլուխը կարասի բերանի կողմը, դեմքով դեպի արևելք, ծնոտը և գանգի սակր մասը բացակայում էին։ Ձվաձև իրանով կարասը (բարձր. 1 մ, պս. տր. 37 սմ, հատ. տր. 22 սմ) լավ թրծած է, դեղնանարնջագույն անգոբով պատած, փայլեցրած, հատակը հարթ է, պսակը դեպի դուրս լայնացող, վրան ունի ակոսավոր լայն գոտի։ Կարասի մեջ կար նաև՝ փայտածխի մի քանի կտոր (տախտ. $I_1$, $VIII_1$, նկ. $35_{1-5}$)։*

**Դամբարան № 2:** *Կարասային, մանկական թաղում։ Կարասը գտնվում*




Նկ. 1 Արտաշատ, Ճարափարնեևյան դամբարանադաշտի տեղադրության պլանը




Նկ. 2 Արտաշատ, Արևելյան դամբարանադաշտի տեղադրության պլանը

էր կողքի պառկեցրած վիճակում, ուղղությունը՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք։ Ոսկորները շատ վատ էին պահպանվել։ Դիրքը հնարավոր չէր որոշել։ Կարասը գրեթե գլանաձև է, ձգված, սուր նստուկով (բարձր. առանց պսակի 84 սմ, հատ. տր. 3 սմ), մակերեսն անփայլ է (տախտ. $II_4$)։

Դամբարան № 3: Կարասային թաղում։ Կարասը պառկեցրած էր կողքի։ Ուղղությունը՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք։ Կարասը ճաքած էր, վատ պահպանված, ուներ ձվաձև իրան, հարթ հատակ։ Պսակը չէր պահպանվել (պահպ. մասի բարձր. 77 սմ, հատ. տր. 18 սմ)։ Դամբարանում գտնվել են կմախքի որոշ ոսկորներ և ականջօղի նման մի իր, պատրաստված պղնձե ոլորած լարից (Նկ. $3_{3,8,9}$, $35_{,7}$)։

Դամբարան № 4: Կարասային թաղում (բացվել է տրակտորիստի կողմից)։ Դիրքը՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք։ Կարասի բերանը հյուսիսարևելյան կողմում (բարձր. 97 սմ, պս. տր. 33 սմ, հատ. տր. 20 սմ)։ Դամբարանում գտնվել է թուխ գույնի մի քրեղան և մի պուլիկ, որը չի պահպանվել (տախտ. $IX_4$, Նկ. $35_{,8}$)։

Դամբարան № 5: Կարասային թաղում։ Կարասը կողքի պառկեցրած վիճակում էր (կեսը՝ երկայնքով բացակայում էր)։ Դիրքը՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք։ Կարասի բերանը հյուսիսարևելյան կողմում (պահպ. մասի բարձր. 110 սմ, պս. տր. 40 սմ, հատ. տր. 20 սմ)։ Կարասը հնում կոտրված է եղել և կարկատված։ Հանգուցյալի կմախքը խիստ կուչ եկած վիճակում էր, ձախ կողքի վրա, գլուխը կարասի բերանի մոտ, ծնկներին մոտեցրած, դեմքով դեպի գետին։ Գանգի կողքերին դրված էին մի այլ ավելի փոքր կարասի շրթի բեկորներ (տախտ. $I_2$)։

Դամբարան № 6: Կարասային թաղում։ Կարասը կողքի պառկեցրած վիճակում էր, դիրքը՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք։ Կարասի բերանը հյուսիսարևելյան կողմում, հանգուցյալի կմախքը խիստ կուչ եկած, ծնկները ծալած վիճակում։ Պառկած էր աջ կողքի՝ գլուխը հյուսիսային կողմում, դեմքը դեպի ներքև։ Դամբարանում գտնվել է մի այլ կարասի մեծ բեկոր, որը ծածկել էր կմախքի կողերը (տախտ. $I_3$)։ Կարասը վատ էր պահպանված, նույնպես ուներ ձվաձև իրան, դուրս լայնացող ուղիղ պսակ և հարթ հատակ (բարձր. 115 սմ, պս. տր. 40 սմ, հատ. տր. 30 սմ)։

Դամբարան № 7. Կարասային թաղում (բացվել էր տրակտորիստի կողմից)։ Կարասը կողքի պառկեցրած վիճակում, դիրքը հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք։ Կարասի բերանը հյուսիսարևելյան կողմում (բարձր. 110 սմ, պս. տր. 36 սմ, հատ. տր. 26 սմ)։ Դամբարանում գտնվել է ոսկորների մի մասը, խառնված վիճակում, և մի այլ կարասի մեծ բեկոր։ Կարասը նման էր № 6-ին։

Դամբարան № 8: Պահպանվել էր կարասի կեսը, կանգնեցրած վիճակում, որը ծառայել է իբրև աճյունասափոր։ Կարասը նման էր մյուսներին (հատ. տր. 20 սմ)։ Դամբարանը լցված էր ավազախառը մոխրաշերտով, փայտածխի կտորներով և առանձին ոսկորների մնացորդներով։

Դամբարան № 9: Կարասային թաղում։ Կարասը մյուսների համեմատ քիչ ավելի ուռուցիկ էր (բարձր. 110 սմ, պս. տր. 50 սմ, հատ. տր. 17 սմ)։

*թաղված էր կողքի վրա, ուղղությունը՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, բերանը հարավարևելյան կողմում, այն ծածկված էր մի այլ կարասի բեկորներով, որոնց վրա ռելիեֆ, ատամնավոր գոտեզարդ կար, դիակը մտցրել են կողքից, պսակի հետ միասին կոտրել են մի հատված, որը նորից տեղն են դրել։ Կարասի մեծ մասը դատարկ էր, հողը միայն ներքևի մասում էր։ Հանգուցյալը թաղված էր խիստ կուչ եկած, ծնկները ծալած վիճակում, գլուխը առաջ թեքած, դեմքով դեպի արևմուտք։ Ծնոտի տակ, վզի մոտ, գտնվեց մի բրոնզե շքասեղ (ճողիկ)՝ ակոսավոր զարդերով, իսկ դեպի դեմքը ծալած ձեռքի մոտ, վատ պահպանված մի երկաթյա մատանի (տախտ. I$_4$, նկ 35$_{9,11}$)։*

*Արտաշատի մյուս՝ հարավարևելյան դամբարանադաշտում, գյուղացիների վկայությամբ, եղել են մի շարք ցածր թմբեր, որոնք հարթեցվել են նախկինում։ Հարթեցման ժամանակ հայտնաբերվել են կարասային թաղումներ և կմախքներ (հիմնահողային թաղումներ)։ Այդ տարածությունը 10 հեկտարից ավելի է։ Մենք պեղեցինք վերջին հարթեցման ժամանակ բացված դամբարանների մնացորդները, որոնք սփռված էին մոտ 2 հա տարածության վրա։ Պեղվեց մոտ 50 կարասային և հիմնահողային թաղում, որոնց մի մասի հետքերն էին միայն պահպանվել։ Այստեղ թաղումների մեծ մասը կատարված էր դիակիզման եղանակով։*

*Հատկապես դժվար էին հիմնահողային թաղումների պեղումները, քանի որ դրանք բոլորն էլ ուղեկցվել էին զոհաբերության կրակով և հոգեհացով։ Հողի կտրվածքում կատարված թաղումների և նրանց կողքին եղած հոգեհացի հետքերը խառնվել էին իրար, և շատ դեպքերում մեկը մյուսից զատելը մեծ դժվարություն էր ներկայացնում։ Հարավարևելյան դամբարանադաշտում կային երկու տիպի թաղումներ՝ դիակիզման եղանակով՝ հողի կտրվածքում, և դիակիզմամբ ու թաղումով՝ կարասների մեջ (նկ. 2)։*

**Դամբարան № 10:** *Կարասային թաղում (մանկական)։ Գրեթե գլանաձև բարակիրան կարաս, հավանաբար սուր նստուկով, դուրս լայնացող ուղիղ պսակով, վզին ռելիեֆ գոտի։ Դիրքը՝ պառկած, ուղղությունը՝ հյուսիս-հարավ, կարասի բերանը հյուսիսային կողմում։ Հանգուցյալը թաղված էր կուչ եկած վիճակում, գլուխը կարասի բերանի մոտ, բայց հակված դեպի հատակը (հարավ)։ Դիակը մտցրել էին հատակի կողմից. ջարդել, հետո մի այլ մեծ անոթով փակել էին։ Խոնավության պատճառով և՛ կարասը, և՛ կմախքը շատ վատ էին պահպանվել (տախտ. II$_1$, VI$_2$, նկ. 5$_1$)։*

**Դամբարան № 11:** *Դիակիզմամբ կատարված թաղում։ Կարասը, որ ծառայել էր իբրև աճյունասափոր, հարթ հատակով էր կանգնեցրած, ուսերից թերի։ Դամբարանում գտնվել են անորոշ փոքր ոսկորներ, թուխ քարից պատրաստված սրաքար, որի մի ծայրը շատ օգտագործելու հետևանքով մաշված էր, հասարակ թասի մի բեկոր և մի այլ անոթի լավ փայլեցրած, կարմիր բեկոր (նկ. 5$_{2,4,6}$)։*

**Դամբարան № 12:** *Հողի կտրվածքում կատարված հիմնահողային թաղում դիակիզմամբ, բավականին մեծ տարածությամբ 150×150 սմ։ Դամբարանում գտնվել են կիսավառված ոսկորներ խառը վիճակում։ Ամբողջ դամբարանը ծածկված էր հողի սև կպչուն շերտով և մոխրով, որոնց մեջ*

*խոշոր եղջերավոր անասունի, ձիու և ոչխարի ոսկորների կիսավառված մնացորդներ, տափաշշերի, ջրամանների, ամֆորաների, կճուճների, թասերի գրեթե ամբողջական, փշրված և առանձին բեկորներ, այդ թվում նաև ջնարակած (երկնագույն) անոթի մի բեկոր, որոնք կրակից սևացած էին և վատ պահպանված։ Գտնվել է նաև կավե խողովակի մի բեկոր (տախտ. III$_1$,* VI$_7$, XI$_{,2,4}$, XIII$_{,3-5}$, XV$_{,5}$, XVIII$_{,1,3}$, *նկ. 3,* $_{-5,7}$. 4$_{,1-6}$, 5$_{,3,5,7-10}$*)։*

**Դամբարան № 13:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Վրան դրված էր երեք անձև փոքր քար, տակը և շուրջը մոխրաշերտ և ածխի մնացորդներ, Այս շերտի մեջ հայտնաբերվեցին վատ պահպանված կիսավառված ոսկորներ, խառը վիճակում, որոնց թվում նաև խոշոր եղջերավոր անասունների ատամներ, տարբեր դիրքերում գտնվող կարասների բեկորներ, մի փոքր կարասի շուրթ, ուսին արված գունավոր և ակոսավոր զարդեր։ Մեծ թվով կավանոթների բեկորներ հայտնաբերվեցին նաև գերեզմանի շուրջը եղած հողի միջից (տախտ.* VI$_8$, *նկ. 6*$_{,1-7}$, *7*$_{,1-7}$*)։*

**Դամբարան № 14:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Խիստ ավերված, պահպանվել են միայն սևացած հողի, ոսկորների մնացորդները։*

**Դամբարան № 15:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել էին միայն սևացած հողի և ոսկորների մնացորդները։*

**Դամբարան № 16:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել են միայն սևացած հողի և ոսկորների մնացորդները։*

**Դամբարան № 17:** *Հիմնահողային թաղում, վրան երկու քար դրած, զբաղեցնում էր փոքր տարածություն։ Ոսկորները շատ քայքայված լինելու պատճառով հնարավոր չեղավ կմախքի դիրքը որոշել։ Կմախքի մոտ հաստ մոխրաշերտ կար, որի միջից գտնվեց խորը թասի, ճրագի, ձկան ափսեի և այլ անոթների բեկորներ, երկաթյա թերի մի դաշույն, երկաթյա գամեր (նկ. 8*$_{,1-10}$*)։*

**Դամբարան № 18:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել են միայն սևացած հողի և ոսկորների մնացորդները։*

**Դամբարան № 19:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Դամբարանադաշտի հետաքրքիր գերեզմաններից մեկն էր։ Պատրաստված էր կավե շաղախով, գրեթե շրջանաձև, երկու կողմից ուներ քիչ կլորավուն ելուստներ, որոնք հատուկ պատրաստված էին դիակիզման, թաղման կրակի համար։ Կավը ուժեղ կրակից կարմրել, թրծվել էր. մեջը շատ հաստ մոխրաշերտ կար վառված ոսկորների և ատամների մնացորդներով։ Դամբարանում հայտնաբերվել են, մոխրաշերտի միջից և վրայից, սևացած ու խոնավությունից քայքայված տարբեր անոթների՝ կարասի, քրեղանների, նրբախեցե անոթների, կճուճների, խփերի բեկորներ, կավե փոքրիկ եղջյուր (տախտ. III*$_2$*, նկ.* 9$_{,1-12}$, 10$_{,1-10}$*)։*

**Դամբարան № 20:** *Հավանաբար, հողի կտրվածքում կատարված թաղում։ Պահպանվել էր հողեհացի ու զոհաբերության համար պատրաստված հարթակը, որը ուղղանկյան ձև ուներ, ուղղությունը արևելքից-արևմուտք (երկ. 130—135 սմ, լայն. 60—67 սմ)։ Միաշար քարերն իրար հետ ամրացված էր կավով, իսկ վրան թեթևակի հարթեցված էր կրաշաղախով, արևելյան կողմի քարերն համեմատաբար խոշոր էին։ Հարթակի կողքերին նույն մակարդակի*



Նկ. 3. 1—5, 7—դամբ. № 12, 6, 8, 9—դամբ. № 3

վրա մոխրաշերտ կար, դամբարանի վերին մասը ավերված էր (տախտ. II$_{3}$, VI$_{1}$)։

Դամբարան № 21: *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Հարթ երեսով, տձև, մեծ քարերով շարված երկարավուն հարթակը նման էր պատի, որը տեղ-տեղ լայնանում ու նեղանում էր։*

*Քարերի վրա և կողքերին, հատկապես հարավային մասում 10—15 սմ հաստությամբ սևացած կրաշերտ կար, ածխի մնացորդներով։ Կրակից կավահողը թրծվել և կարմրել էր։ Մոխրաշերտերի մեջ կրակից սևացած կճուճի, խոհանոցային անոթների ու կարասների բազմաթիվ բեկորներ կային։*

Դամբարան № 22: *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել էր միայն սևացած հողի և ոսկորների մնացորդների մի մասը։ Դամբարանում գտնվել է սուր նստուկով անոթ դնելու մի մեծ կավե հենակի կեսը, պսակների տակ արված ատամնաձև և պարանաձև զարդերով (տախտ. XVI$_{,6}$, Նկ. 11$_{,1}$)։*

Դամբարան № 23: *Դիակիզմամբ թաղում. կարաս, որը ծառայում էր աճյունասափոր։ Պահպանվել էր կարասի ներքին մասը, գրեթե ուղղահայաց դիրքով։ Այրված ոսկորների մնացորդները վատ էին պահպանված։ Դամբարանում գտնվել են խորը թասի, գավաթի և այլ անոթների կանթ և բեկորներ (Նկ. 11$_{,2,3}$)։*

Դամբարան № 24: *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Պատրաստված էր գրեթե ուղղանկյունաձև մի հարթակ (երկ. 180—220 սմ, լայն. 150—170 սմ), տարբեր տեսակի սալաքարերով, աղորիքներով և մանր գետաքարերով, այդ թվում կարծր մարմարատիպ կրաքարերով, որոնք քիչ ավելի բարձր մակարդակի վրա էին գտնվում աղորիքի քարերից։ Քարերի արանքից գտնվեցին սկուտեղի, պնակի բեկորներ։ Վերին հարթակի տակ կար քարերի երկրորդ շարքը, որը նորից կազմված էր տձև քարերից և աղորիքներից (այդ թվում նաև լծակավոր, ընդամենը 8 հատ)։ Երկու շարքերի արանքում հանդիպում էին ոսկորներ և խեցեղենի բեկորներ։ Կենտրոնական մասում սևացած հող էր, որի մեջ կային մարդու ոտքի, այլ ոսկորների և ատամի մնացորդներ, ծածկված գունազարդ ամանի բեկորներով։ Սևացած հողի մեջ երևում էին ածխի և մոխրի մնացորդներ։ Ոսկորներ գտնվեցին նաև կողքի ավազահողերի միջից։*

*Դամբարանի հարավային ծայրում բացված մեծ, գրեթե քառակուսի տձև քարի տակ, սևացած հողաշերտում, նույնպես մարդու այրված ոսկորներ և ամանների բեկորներ դուրս եկան։ Ամանների մեջ և շուրջը գտնվեցին խոշոր և մանր եղջերավոր անասունների մեծ քանակությամբ ոսկորներ։ Բոլոր կավանոթները կոտրված էին և խառը վիճակում լցված։ Հայտնաբերված խեցեղենի մեջ կային մեծ սկուտեղի 1/3-ը, ոլորուն չորս կանթով կճուճի երկկանթանի կարմիր փայլեցրած սափորների, թասերի, խոհանոցային տարբեր տիպի անոթների մասեր։ Ածխաշերտի մեջ փռված դամբարանում կային փայտածխի և մոխրի հետքեր։ Վերին քարից հաշված խորությունը մոտ 1 մ էր (տախտ.* XII$_{,1}$, XIV$_{,7}$, XV$_{,1}$, *Նկ. 11*$_{,4-6}$, *12*$_{,1-7}$, *13*$_{,1-9}$, *14*$_{,1-3}$, *15*$_{,4,5}$)։




Նկ. 4. 1—6—դամբ. № 12

Դամբարան № 25: Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել էին սևացած հողի և որոշ ոսկորների մնացորդներ։ Դամբարանում հայտնաբերվել են նաև խոստերև շրթով մեծ սափորի պսակ՝ ներճկված կանթի մասով, մի մեծ անոթի ոլորուն կանթի կեսը և գունազարդ գավաթի մի մասը (Նկ. $14_{,4-8}$)։

Դամբարան № 26: Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել էր սևացած հողի և որոշ ոսկորների մնացորդներ։

Դամբարան № 27: Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել էին սևացած հողի և որոշ ոսկորների մնացորդներ։ Դամբարանում հայտնաբերվել են սպիտակ մարմարատիպ քարից պատրաստված մի սրաքար և կոպիտ պատրաստված ձկան ափսեի հատակի մաս (տախտ. $XIV_{,5-6}$, $XV_{,1}$, Նկ. $15_{,1-3}$)։

Դամբարան № 28: Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել էին սևացած հողի և որոշ ոսկորների մնացորդներ։

Դամբարան № 29: Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել էին սևացած հողի և որոշ ոսկորների մնացորդներ։

Դամբարան № 30: Դիակիզմամբ կատարված թաղում։ Դամբարանն իր ձևով տարբերվում էր մյուսներից։ Այն մասամբ հիշեցնում էր № 19 դամբարանը։ Պատրաստված էր մանր դեաաքարերից, շրջանաձև, կանոնավոր գեղեցիկ շարվածքով (տր. 95 սմ, բարձր. պատի տակ 35 սմ, կենտրոնում, փոսիկից 52 սմ)։ Նույն քարերից շարված հատակի կենտրոնում շրջանաձև փոսիկ էր արված (տր. 30 սմ, խոր. 10 սմ)։ Դամբարանը ներսից հարթեցված էր կրաշաղախով։ Դամբարանը, որը թաղման նոսեհ համար էր, լցված էր կրակից սևացած մոխրախառն հողաշերտով, որի մեջ հանդիպում էին խոշոր եղջերավոր անասունի ոսկորներ, փայտածուխ և սևացած անոթների բեկորներ, իսկ կենտրոնի փոսիկում միայն մոխիր էր, ըստ երևույթին առաջացած դիակիզումից (տախտ. $III_{,3}$, $VI_{3,4}$ $XI_{15}$, Նկ. $15_{,6}$, $16_{,1-8}$, $17_{,1}$)։

Դամբարան № 31: Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Շուրջը եղած ավազաշերտից առանձնանում էր մուգ գույնով։ Մեծ կարասի 1/3 մասը, որը վրան ուներ ռելիեֆ պարանաձև զարդ, ծածկված էր մարդու և անասունների վառված ոսկորների մնացորդներով, սևացած մոխրախառն հողի մեջ ուղղահայաց դիրքով կանգնեցրած էր կրակից սևացած մի փոքր կարաս։ Հայտնաբերվել են նաև մեծ քանակությամբ տարբեր տիպի կարասների բեկորներ, դեպի ներս ծռված շրթով թաս (տախտ. $IX_{,4}$, Նկ. $15_{,7}$)։

Դամբարան № 32: Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված։ Պահպանվել էին սևացած հողի մնացորդները, որի մեջ հայտնաբերվել են գունազարդ փիալայի շրթի, կավե թասերի, բաժակների, մեծ անոթների, սափորների, կճուճների, ձկան ափսեի բեկորներ, կավե ճրագ (Նկ. $17_{,2-8}$, $18_{,1,3,5,7,8}$)։

Դամբարան № 33: Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել էին սևացած հողի և ոսկորների մնացորդները։ Դամբարանում հայտնաբերվել են թասերի, քրեղանների և կճուճի բեկորներ (Նկ. $18_{,2,4,6,9,10}$, տախտ. $XI_{,3}$)։

Դամբարան № 34: Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված,

պահպանվել էին սևացած հողի և ոսկորների մնացորդներ։ Դամբարանում գտնվել են տարբեր անոթների, բաժակի. հատակների և շրթերի բեկորներ (նկ. 19,1—3.5)։

Դամբարան № 35: Կարասային թաղում, պառկեցրած վիճակում։ Ուղղությունը հարավ-արևմուտք, հյուսիս-արևելք, կարասի բերանը հյուսիսարևելյան կողմում (բարձր. 114 սմ, պս. տր. 35 սմ, հատ. տր. 19 սմ)։ Դիակը թաղված է եղել ծնկները ծալած, խիստ կող եկած վիճակում, գլուխը դրեթե կենտրոնում, դեմքով դեպի հարավ-արևելք։ Ոսկորները խոնավությունից փտել էին, գանգը տափակել էր։ Դամբարանում գտնվել են դունաղարդ քրեղանի հատակ արտահայտվող ոտքով և անոթի մի շուրթ (տախտ. IV,1, նկ. 19,4.6.9)։

Դամբարան № 36: Դիակիզմամբ կատարված թաղում։ Սուր նստուկով ուղղահայաց կանգնեցրած կարասը ծառայել է իբրև աճյունասափոր։ Այն ուսերից թերի է (պահպ. մասի բարձր. 80 սմ, հատակի տր. 7 սմ, ուս. մասի տր. 66 սմ)։ Դամբարանում գտնվել են փայտածխի առանձին կտորներ, ոսկորների մասեր, թռչունի ճանկերի ոսկորներ, ինչպես նաև թույխ ամանի և փոքր թասի բեկորներ։ Շուրջը կրակից սևացած հողաշերտ էր, դիակիզումը կատարվել է դամբարանի կողքին (տախտ. III,4, նկ. 19,12)։

Դամբարան № 37: Կարասային թաղում, պառկեցրած վիճակում։ Ուղղությունը հարավ-արևմուտք, հյուսիս-արևելք, կարասի բերանը հյուսիսարևելյան կողմում։ Կարասի հատակը հարթ էր։ Կարասի կեսը երկայնքով բացակայում էր, սակայն պեղելուց բացվեց մանկական մի կմախք. մոտ 7—8 տարեկան հասակի, կաթնատամներով, գլուխը հյուսիսարևելյան կողմում, թաղված էր կուչ եկած, ծնկները ծալած վիճակում, ոսկորները շատ վատ էին պահպանված։ Դամբարանում կմախքի վզի և թևերի մոտ գտնվել են երկու ականջօղեր, մի ապակե կնիք. որի ներքին մակերեսին պատկերված է կանգնած մարդու պայքարը վարազի հետ և ապակյա ուլունքներ (տախտ. IV,2, նկ. 19,7,8,10,11)։

Դամբարան № 38: Դիակիզմամբ կատարված թաղում։ Սուր նստուկով, ուղղահայաց կանգնեցրած կարասը ծառայել է իբրև աճյունասափոր (պահպ. մասի բարձր. 60 սմ, հատ. տր. 6 սմ, ուս. մասի տր. 54 սմ)։ Դամբարանում գտնվել են կողքի առանձին կիսավառված ոսկորներ, մոխրի սև շերտի մեջ կրակից թրծված աղյուսի կտոր, ոչխարի մի վեգ և խեցեղենի՝ բաժակի, խորը թասի, կարասի բեկորներ, հատակի մասում մոխրի և փայտածխի հաստ շերտ։ Դիակիզումը կատարվել է կարասի կողքին (տախտ. XXVI,1)։

Դամբարան № 39: Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, շրջակա ավազահողից տարբերվում էր թույխ մոխրով և կրակից սևացած հողաշերտով։ Դամբարանում գտնվել են վառված ոսկորների մնացորդներ, կենդանու ոսկորներ, այդ թվում բնորոշ ոչխարի վեգը, խեցեղեն տարբեր անոթների բեկորներ, դնդաձև իրանով, կարմիր անգոբով պատած փայլեցրած սափորի մասեր (նկ. 20, 1—4)։

Դամբարան № 40: Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Սա ամենամեծ դամբարանն է։ Դժբախտաբար, վերին շերտը գրեյդերով քանդված լինելու

պատճառով հնարավոր չեղավ սահմանազատել դամբարանները։ Հավանաբար այստեղ եղել է երեք թաղում։ Վրայի քարերը չէին պահպանվել, կրակից սևացած մոխրի հաստ շերտերով հողի մեջ կային մարդու վառված ոսկորների առանձին մասեր։ Գտնվեցին մեծ քանակությամբ կենդանիների՝ խոշոր եղջերավոր անասունների, ձիու և ոչխարի վեգեր։ Հայտնաբերվեցին կարասների, սկուտեղների, ջրամանների խփերի, ձկան ափսեի, ճրագների, տարբեր տիպի ու խորության գունազարդ թասերի, քրեղանների շատ բեկորներ, այդ թվում նաև անոթիկ, բնորոշ երկնագույն ջնարակով անոթի մի բեկոր։ Ուշագրավ են նաև սպիտակ կավից պատրաստված գունազարդ մեծ անոթի բեկորը և հատկապես կավե արձանիկները, որոնցից մեկը կնոջ արձանիկի վերին կեսն է, ձախ ձեռքին բռնած քնարի մի մասով, մյուսը՝ ձիավորի արձան է, լավ մշակված մանրամասներով, դժբախտաբար, պահպանվել է ձիավորի և ձիու իրանի մի մասը միայն։ Այստեղ ամենակարևոր նորություններից մեկը թասերի վրա եղած նավթի (մաղութի) մնացորդներն են (տախտ. XV$_{,8}$, XXV$_{,5}$, XXVI$_{,5}$, նկ. 20$_{,5-14}$, 21$_{,1-10}$, 22$_{,1-8}$, 23$_{,1-12}$, 24$_{,1-14}$ 25$_{,1-8}$, 26$_{,1-3,5}$)։

**Դամբարան № 41**: Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել էր միայն հողեհացի և զոհաբերության համար պատրաստված հարթակը։ Այն բաղկացած էր մանր քարերից շարված մեկ շարքից (1,60×1 մ), որը հարթեցվել էր կրաշաղախով։

Այս դամբարանի հարթակը նման է № 20-ին, սակայն քարերը փոքր են № 30 դամբարանի քարերի նման։ Հարթակի վրայի շերտից փայտածխի մնացորդների հետ գտնվել են նաև գունազարդ ջրամանի, ճրագի, փիալայի, ջնարակած և այլ անոթների բեկորներ (տախտ. II$_{3}$, նկ. 26$_{,4.6-11}$)։

**Դամբարան № 42**: Դիակիզմամբ իբրև աճյունասափոր ծառայող կարասով թաղում, կարասն ունի հարթ հատակ, ուռուցիկ իրան, ռելիեֆ պարանաձև զարդեր։ Դիակիզումը կատարվել էր կարասի մեջ, որի հետևանքով կարասի ներսը սևացել էր, ներքևի մասում կային ածխի, վառված փայտի մնացորդներ և մոխրի լայն շերտ։ Դամբարանում գտնվել են ոսկորների փոքրիկ կտորներ, այդ թվում նաև մի վեգ, սևացած խեցեղենի, պնակի, փոքր կարասի բեկորներ, ճարմանդ, նետասլաք։ Կարասի կողքի սևացած հողաշերտից հայտնաբերվեցին տարբեր տիպի, մեծ քանակությամբ խեցեղեն բեկորներ, մոզաիկ ապակուց պատրաստված անոթի մի հատակ, մանդաղի մաս և այլն (տախտ. IV$_{3}$, XXXII$_{2,7}$ նկ. 17$_{,10}$, 26$_{,12}$, 27$_{,1-15}$)։

**Դամբարան № 43**: Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, վերին մասը չկար, պահպանվել են մոխրի, կրակից սևացած հողի (50 սմ), վառված ոսկորների մնացորդներ, այդ թվում ոչխարի վեգ։ Դամբարանում հայտնաբերվել են տարբեր տիպի թասերի, սափորների, կարասների, կճուճների, մեծ թասի, խոհանոցային այլ անոթների կրակից սևացած բեկորներ, ինչպես նաև ջնարակած անոթի առևակոսներով զարդարված մի բեկոր (նկ. 28$_{,1-10}$)։

**Դամբարան № 44**: Կարասային թաղում։ Կողքի պառկեցրած կարասը տեղից խախտված էր, ուստի կմախքի դիրքը հնարավոր չեղավ որոշել։ Միջի հողը խառնված էր, կողքին սևացած հողաշերտ կար։ Դամ-




Նկ. 5. 1—դամբ. № 10, 2, 4, 6—դամբ. № 11, 3—10—դամբ. № 12

*բարանում գտնվել են տարբեր տիպի անոթների՝ ճրագների, թասերի, սափորների, կարասի սուր նստուկ, կճուճի վերին կես և երկաթյա տափակ բերանով, երկար պոչով մի իր (տախտ. IV₄, նկ. 29*$_{,1-10}$*)։*

**Դամբարան № 45:** *Կարասային թաղում։ Սուր նստուկով, դիրքը հնարավոր չեղավ որոշել անգից խախտված լինելու պատճառով։ Հանգուցյալի ոսկորները քայքայված էին։ Շուրջը եղած մոխրի և սևացած հողի մեջ կային վառված ոսկորներ, ոչխարի վեգ և խեցեղենի սևացած բեկորներ (նկ. 30*$_{,1-5,7}$*)*

**Դամբարան № 46:** *Դիակիզմամբ կատարված թաղում։ Կարասը ծառայել է իբրև աճյունասափոր, ուներ սուր նստուկ, դիրքը հնարավոր չեղավ պարզել անգից խախտված չլինելու պատճառով։ Հայտնաբերվեց մի մեծ աղյուս (30×40×15 սմ), որն հավանաբար դրված է եղել կարասի բերանին։ Դամբարանում գտնվել են վառված ոսկորներ, այդ թվում ոչխարի վեգ և խեցեղենի բեկորներ։ Շուրջը եղած կրակից սևացած հողը քիչ էր (նկ. 31*$_{,1-11}$*)։*

**Դամբարան № 47:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Պահպանվել էին մոխրի հետքերը և սևացած հողի մնացորդները, որոնց մեջ հանդիպում էին կարասների և խեցեղենի բեկորներ։ Դամբարանի հյուսիսային անկյունում մեծ քանակությամբ ածուխ և ոսկորներ կային։ Ածխի շերտը 15 սմ հաստություն ուներ և լավ պահպանված էր։ Դամբարանում գտնըվել է հեծյալի կավե արձանիկ, որն իր կատարման արվեստով զիջում է № 40 դամբարանում հայտնաբերված արձանիկի բեկորին (տախտ. XXVI,₄)։*

**Դամբարան № 48:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել չեն սևացած հողի և որոշ ոսկորների մնացորդներ։ Դամբարանում հայտնաբերվել են տարբեր թասերի, ձկան ափսեի բեկորներ (նկ. 33*$_{,1,4}$*)։*

**Դամբարան № 49:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել չեն սևացած հողի և մոխրի մնացորդները։ Դամբարանում գտնըվել են տարբեր կարասների, գնդաձև մեծ անոթի, քրեղանի, փիալների բեկորներ (նկ. 33*$_{,2,6,8}$*)։*

**Դամբարան № 50:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել չեն սևացած հողի և մոխրի մնացորդները։ Դամբարանում հայտնաբերվել են սափորի, բաժակի, թասի և քրեղանների բեկորներ (նկ. 33*$_{,3,7,10}$*)*

**Դամբարան № 51:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել չեն սևացած հողի և մոխրի մնացորդները։ Դամբարանում հայտնաբերվել են միկանթանի կճուճի վերին մասը, թասի և այլ անոթների շրթեր ու գոմաղարդ բեկորներ (նկ. 33*$_{,9,11-13}$*)։*

**Դամբարան № 52:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել էին սևացած հողի և ոսկորների մնացորդները։ Դամբարանում հայտնաբերվել են կարասների շրթեր և կարմիր փայլեցրած թասի հատակը (նկ. 30*$_{,6,9,11}$*)։*

**Դամբարան № 53:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել չեն սևացած հողի և ոսկորների մնացորդները։ Դամբարանում*





ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ




Նկ. 6. 1—7—դամբ. № 13

հայտնաբերվել են թասերի և այլ անոթների շրթեր, հատակների մասեր (նկ. 30,$_{8,10,12}$)։

**Դամբարան № 54:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել էին սևացած հողի և մոխրի մնացորդները։ Դամբարանում գտնվել են գնդաձև փոքր թասի և սկուտեղի բեկորներ (նկ. 34,$_{1}$)։*

**Դամբարան № 55:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Ավերված, պահպանվել էին սևացած հողի և ոսկորների մնացորդները։ Դամբարանում գտնվել են կարմիր փայլեցրած խորը թասերի բեկորներ (նկ. 34,$_{2-5}$)։*

**Դամբարան № 56:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Դամբարանում մոխրաշերտի և սևացած հողի միջից գտնվել են վառված ոսկորներ, խեցեղենի բեկորներ, երկաթյա նիզակ և տեգի ծայրեր, դումադարդ կիսագնդաձև թասերի բեկորներ։ Գավաթի մաս, օղակաձև ոտքով հատակներ և ոչխարի մի վեգ (նկ. 32,$_{1-10}$)։*

**Դամբարան № 57:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Դամբարանում գտնվել են մոխրաշերտի միջից դումադարդ խեցեղենի՝ նրբախեցի գնդաձև թասի, սկուտեղի բեկորներ և ոչխարի մի վեգ (նկ. 34,$_{6,7}$)։*

*Մյուս դամբարանադաշտը գտնվում է Խորվիրապի բլուրների արևմտյան մասում։ Այստեղ ցածրադիր բարձունքը հարթեցնելիս տրակտորիստը հանդիպել էր կարասային թաղման, որը սակայն ավերվել էր։*

*Քննությունը ցույց տվեց, որ 2 հա տարածությամբ բարձունքը ծածկված է տարբեր ժամանակների մ. թ. ա. I—մ. թ. IV դդ. դամբարաններով։ Այստեղ ևս մեծ քանակությամբ փայտածխի և մոխրի շերտ կար, մարդկային և կենդանական ոսկորների մնացորդներով, խոնավ կավահողը շատ կպչուն էր։ Այս դամբարանադաշտում, ի տարբերություն նախորդների, թաղումը կատարվել է մեծ մասամբ փայտե դագաղների մեջ։ Հողի շերտում վատ պահպանված կմախքների կողքին հայտնաբերվել են երկաթե փոքր գամեր, որոնք բավականին հաստ, կլոր կտրվածքով աստիճանաբար հաստացող մեխեր են, որոնց վրա պահպանվել են փայտի հետքերը։ Գտնվել են նաև երկաթյա ժապավենաձև ուղիղ և անկյունավոր թիթեղներ։ Այս դամբարանադաշտում հանդիպում են նաև կավե դագաղ-սարկոֆագներ։*

**Դամբարան № 58:** *Կարասային թաղում։ Բացվել է բլուրն հարթեցնելիս, տրակտորիստի կողմից, կարասի և կմախքի դիրքն անհայտ է։ Գտնվել է կավե գնդաձև, երկկանթանի շրաման և ապակյա, ձվաձև իրանով, անդական համարվող երկու սրվակ (տախտ. XX,$_{6}$, նկ. 42,$_{1-3}$)։*

**Դամբարան № 59:** *Փայտե դագաղի մեջ կատարված թաղում։ Հանգուցյալին պառկեցրել էին մեջքի վրա, գլուխը արևմտյան կողմում։ Շուրջը հողը մոտ 3 մ տրամագծով հոգեհացի կրակից սևացել էր և մեջը կային փայտածխի և մոխրի շերտեր։ Դամբարանում գտնվել են խոշոր կենդանիների՝ եզան, ձիու ոսկորներ՝ խառը վիճակում, վզի մասում գտնվեցին մեծ քանակությամբ ուլունքներ ապակու պաստայից, մուգ թվում ոսկեջրած, երկշերտ և գրաֆիտից պատրաստված տարբեր ձևերի ուլունքներ, բրոնզյա մատանի, ականջօղ, փոքրիկ մեդալիոն, ճարմանդ, զանգակ, քարե ճարմանդ և փայտե դագաղի մեծ քանակությամբ երկաթյա գամեր (նկ. 43,$_{1-7}$)։*

**Դամբարան № 60:** *Փայտե դագաղի մեջ կատարված թաղում։ Կմախքը վատ պահպանված։ Դամբարանում հայտնաբերվել են երկկանթանի, օղակաձև ոաքով, տանձաձև իրանով մի անոթ, բրոնզյա, 8 սմ տրամագծով թիթեղ (երևի հայելի) և փայտե գագաղի երկաթյա գամեր (տախտ. $XV_{2}$, $45_{,6-9}$)։*

**Դամբարան № 61:** *Կարասային թաղում։ Բացվել էր հարթեցնելիս, գրեյդերը սարել էր կարասի գրեթե կեսը։ Այն պառկած վիճակում էր, հյուսիս-հարավ ուղղությամբ, կարասի բերանը հարավային կողմում (բարձր. 90 սմ, բեր. տր. 30 սմ, հտ. տր. 15 սմ)։ Խոնավ կավահողի մեջ կարասը չաա վաա էր պահպանվել։ Կարասի բերանը ծածկված էր բարակ խեցու բեկորով, կմախքը մանկական էր։ Այն կարասի մեջ էր մտցվել կողքը ջարդելուց հետո, սակայն բեկորները լավ չեն ամրացվել, ուստի հետագայում նրանք նույնությամբ ընկել են ներս և ջարդել գանգը։ Ոսկորները շատ վատ էին պահպանվել, ոտքերը ծալած էր եռ, գանգը նույնպես եռ էր ծռած, գիմքով դեպի արևելք։ Գանգի մոտ գտնվեց բրոնզյա երկու փոքրիկ ականջօղ, վզի մոտ՝ բրոնզյա փոքրիկ հայելի և ապակու պաստայից պատրաստված տարբեր տիպի ուլունքներ, թևին՝ բրոնզյա ապարանջան (նկ. $44_{,3.7,8,11,12}$)։*

**Դամբարան № 62:** *Փայտե դագաղի մեջ կատարված թաղում։ Մեջքի վրա պառկած վիճակում, ոսկորները վատ պահպանված։ Շուրջը հոգեհացի կրակից սևացած հող, փայտածխի և մոխրի մնացորդներով։ Դամբարանում հայտնաբերվել են գնդաձև իրանով, կարմիր շրջանաձև փայլեցրած, երկկանթանի ջրաման, սափորի վիզ և ոչխարի 3 վեգ, գագաղի երկաթյա գամերը փայտի հետքերով (նկ. $45_{,1}$)։*

**Դամբարան № 63:** *Փայտե դագաղի մեջ կատարված թաղում։ Հարթեցման ժամանակ ավերվել էր, խառնված ոսկորների շուրջը հոգեհացի կրակից սևացած հողաշերտ էր, որի մեջ նկատվում էին կենդանիների վառված ոսկորներ, հավանաբար եզան և ոչխարի։ Գտնվել է միկանթանի սափոր, լագինոս (սեղմված իրանով անոթ) և դագաղի երկաթյա գամեր, երկաթե անկյունավոր ժապավենաձև թիթեղ (նկ. $44_{,4}$, $50_{,4}$)։*

**Դամբարան № 64:** *Փայտե դագաղի մեջ կատարված թաղում։ Ավերված, կմախքի դիրքը հնարավոր չեղավ պարզել։ Շուրջը սևացած կավահող, փայտածխի և մոխրի հետքերով, մեջը նկատվում էին կենդանիների վառված ոսկորներ։ Դամբարանում գտնվել են գնդաձև, քիչ ձգված իրանով մի ջրաման, մեծ քանակությամբ երկաթյա գամեր (տախտ. $XV_{,3}$, նկ. $45_{,6}$)։*

**Դամբարան № 65:** *Փայտե գագաղի մեջ կատարված թաղում։ Ավերված, կմախքի դիրքն հնարավոր չեղավ պարզել, ջուրջը հոգեհացի կրակից սևացած կավահող, ոսկորների մնացորդներով։ Դամբարանում գտնվել են ուռուցիկ իրանով միկանթանի (թերի) սափոր, ներճկված վզով մեծ թասի բեկոր, կարմիր ներկած, փայլեցրած, երկաթե 10 գամ փայտի մնացորդներով (նկ. $47_{,1,3}$)։*

**Դամբարան № 66:** *Փայտե դագաղում կատարված թաղում, Ավերված, կմախքի դիրքը հնարավոր չեղավ պարզել, ջուրջը հոգեհացի կրակից սևացած հող էր, որի միջից գտնվել են ուռուցիկ իրանով միկանթանի սափոր (թերի) և երկաթյա գամեր։*




Նկ. 7. 1—7—դամբ. № 13

**Դամբարան № 67:** *Փայտե դագաղի մեջ կատարված թաղում։ Կմախքը մեջքի վրա պառկած, մոտը դրված գնդաձև, կարմիր, երկկանթանի ջրաման, երկու կողմից սեղմված երկկանթանի տափաշիշ, բրոնզյա հայելի. որը շատ վատ էր պահպանված, ուստի վերցնել հնարավոր չեղավ, երկաթյա գամեր, վրան փայտի հետքերով։ Ծուրջը մեծ տարածության վրա մոխրաշերտ կար, փայտածուխ, խոշոր անասունների վառված ոսկորներ և խեցեղենի բեկորներ (տախտ. VII,3, VIII,2, նկ. 46,1.2.4)։*

**Դամբարան № 68:** *Հավանաբար փայտե դագաղի մեջ կատարված թաղում, հանգուցյալը պառկեցրած էր մեջքի վրա, արևելք-արևմուտք ուղղությամբ, գլուխն արևելյան կողմում, նույն մակարդակի վրա շուրջը սև մոխրաշերտ էր կենդանիների վառված ոսկորներով։ Դամբարանում գտնվեց երկկանթանի մի ջրաման, կարմիր, շրջանաձև փայլեցումով (տախտ. VII,4, նկ. 46,3)։*

**Դամբարան № 69:** *Ամֆորայի մեջ կատարված թաղում։ Գրեթե գլանաձև, կլոր հատակով ամֆորան (պսակը թերի, բարձր. 47 սմ, վզի տր. 18 սմ) դրված էր կանգնեցրած դիրքով, մեջը մանկական մի կմախք, ոտքերը ծալած վիճակում, դեմքով դեպի արևմուտք, ոսկորները շատ վատ էին պահպանվել։ Դամբարանում գտնվեց ուղղահայաց եզրերով մի ափսե (տախտ. V6, XIV,4, XVIII,4, նկ. 47,4.6)։*

**Դամբարան № 70:** *Կավե զագաղ (սարկոֆագ), ուղղությամբ հարավ-հյուսիս, կոպիտ պատրաստված (երկ. 90 սմ, լայն. կենտր. 32 սմ, խոր. 13 սմ), գլխի մասում ավելի ուղիղ ու լայն (31 սմ), ոտքերի կողմում ավելի նեղ (13 սմ)։ Այն հանգուցյալի համար կարճ է եղել, ուստի ոտքերի մասում սարկոֆագը ջարդել են և տեղավորել, դիակը դրել են մեջքի վրա պառկեցրած, գլուխը հյուսիսային կողմում, թեքած դեպի ձախ, թևերը կողքից երկարացրած (տախտ. V2)։ Սարկոֆագը ծածկված էր. նույնպես կոպիտ պատրաստված, մեծ կղմինդրով, որը կոտրատված էր և բեկորները տեղից շարժված, որով այն ստացել էր մի տեսակ թաղի ձև (պահպ. մասի. երկ. 105 սմ, լայն. մի կողմում 48 սմ, մյուսում 53 սմ)։*

**Դամբարան № 71:** *Կավե սարկոֆագ, ուղղությունը արևելք-արևմուտք, լայն մասը արևմայան կողմում (երկ. 190 սմ, լայն. գլխի մասում 47 սմ, ոտքերի մասում 25 սմ), սարկոֆագի վերին մասը չէր պահպանվել։ Այն ըստ երևույթին դեռևս հնում կողոպտված է, որովհետև մեջը դատարկ էր։ Գտնվեցին թևի մի քանի փոքր ոսկորներ միայն, վատ պահպանված վիճակում։*

**Դամբարան № 72:** *Կավե սարկոֆագ՝ խնամքով պատրաստված (երկ. 165 սմ, գլխի մասում 44 սմ, ոտքերի մոտ 20 սմ, խոր. 30 սմ), ներս լայնացող պսակով, ուղղությամբ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, գլուխը հյուսիս-արևմայան կողմում։ Սարկոֆագը ծածկված էր կողք-կողքի շարած թրծած երեք աղյուսով (51×60, 56×50, հաստ. 5 սմ)։ Հանգուցյալը թաղված էր մեջքի վրա, ուղիղ, թևերը կողքերին։ Մեջը ուղեկցող իրեր չկային (տախտ. V1)։*

*Վերևում նշվեց քաղաքի տարածքում և պարիսպներով ամրացված բլուր-*

ների վրա պեղումներով և շինարարական աշխատանքների ժամանակ բացված դամբարանների մասին։ Բացի դրանցից, քաղաքի տերիտորիայում արևելյան և հյուսիսարևելյան հատվածներում հայտնաբերվել են նաև քարարկղային և հիմնահողային այլ դամբարաններ։ Դրանք հավանաբար պատկանում են քաղաքի տարբեր դամբարանադաշտերի։ Հայտնի է, որ քաղաքը տարբեր ժամանակ ունեցել է տարբեր սահմաններ, ուստի նախկինում եղած դամբարանները քաղաքի ընդարձակման հետևանքով հաճախ մնացել են նորակառույց բնակելի թաղամասերի տակ, ինչպես Արգիշտիխինիլիում, Գառնիում, կամ արդեն լքված թաղամասերի վրա ստեղծվել են նոր դամբարանադաշտեր։

I, VII և VIII բլուրների պեղումներով պարզվել է, որ Հայաստանում եղել է նաև հանգուցյալին ուղղակի սենյակի հատակի տակ, պարիսպների հիմքերի մոտ թաղելու սովորություն։ Դրանք հիմնականում, իհարկե, մանկական թաղումներ են, կատարված կարասների, քարարկղների մեջ կամ հողի կտրվածքում։ Այդպիսի սովորություն հնում եղել է նաև Շումերում, Ասորեստանում, խուռիների[1], հույների, վրացիների մոտ և այլուր։

Հետաքրքիր է, որ պարթևական շրջանում, ի տարբերություն հունական ու պարթևական քաղաքների, Միջագետքում քաղաքներն ու դամբարանադաշտերն իրարից անջատված չեն և նրանք հստակ սահմանագծեր չունեն, իսկ Բաբելոնին բնորոշ են քաղաքային պարսպից ներս գոյություն ունեցող գերեզմանները[2]։

VIII բլրի վրա, 5a քառակուսում բացվել են մանր քարերով շարված երեք դամբարաններ առանց ուղեկցող նյութերի։ Հնագիտական նյութերի աղքատիկ և ճարտարապետական մնացորդների անկանոն լինելը նկատի ունենալով՝ Փ. Տեր-Մարտիրոսովը[3] ենթադրել է, թե տվյալ բնակարանը պատկանել է բնակչության ավելի աղքատ խավերին, հնարավոր է ստրուկներին, և հայտնաբերված խեցեղենով թվագրում է մ. թ. I դարով։ Սակայն այդ և կողքի քառակուսիներում բացվել են նաև այլ դամբարաններ՝ ուղեկցող նյութերով։

Պեղումներով պարզված է, որ VIII բլուրը եղել է քաղաքի արհեստավորական թաղամասերից մեկը, այստեղ բնակիչները իրոք հարուստ չեն եղել և նրանց բնակարաններում ունեցվածքային տարբերություններ համարյա չեն նկատվում, սակայն ուղեկցող նյութեր չունեցող դամբարանները ստրուկներին վերագրելը հազիվ թե կարելի լինի հիմնավորված համարել։

**Դամբարան:** Փոքր Վեդի գյուղի հարավարևելյան ծայրին ջրմուղի գիծ անցկացնելիս ի հայտ են եկել լատիներեն երկու արձանագրություն՝ մեկը շատ խոշոր տառերով, որը կրում է հռոմեական Տրայանոս կայսեր անունը, իսկ մյուսը մանր տառերով տապանաքար է։ Երկուսն էլ փորված են Վեդու կրաքարից պատրաստված սալերի վրա։ Բացի արձանագրված քարերից,

---

[1] *И. М. Дьяконов,* Народы древней передней Азии, ПЭС, 1, М., 1958, стр. 32, 57.

[2] *Г. А. Кошеленко,* Культура Парфии, М., 1966, стр. 114, 116.

[3] *Ф. И. Тер-Мартиросов,* Античные печи из раскопок Арташата, ВОН, 1975, № 7, стр. 72.



Նկ. 8. 1—10—դամբ. № 17

տեղում հայտնաբերվել էին մի սյան խարիսխ՝ շինված ավելի մանրահատիկ կրաքարից, շարվածքի մի քար, երկու հնատիպ աղորիք։ Հավաքվել են մ. թ. I—III դարերի խեցեղենի բեկորներ։

Ձեռնարկված մասնակի պեղումների շնորհիվ հայտնաբերվել են հելլենիստական ժամանակաշրջանի աղորիքներ, խեցեղենի բազմաթիվ բեկորներ մի փոքր տարածության վրա, արձանագրությանը ժամանակակից· անտաշ կոպիտ քարերով պատրաստված սալահատակի մի մասը, որը երևի ծածկված է եղել կրաշաղախով, իսկ մոտ 150 մ հեռավորության վրա գտնվել է կրաքարից պատրաստված ևս մի սյան խարիսխ՝ ավելի փոքր չափերի[4]։

Լատիներեն արձանագրությունները գտնվել են բլուրներից 2,5 կմ դեպի հյուսիս-արևելք։

Փոքր Վեդի գյուղի կենտրոնում, դպրոցի հիմքեր փորելիս նույնպես գտնվել է կրաքարե մի խարիսխ։ Կրաքարե խարիսխներ և մշակված առանձին քարեր հավաքվել են նաև Արտաշատի սահմաններում գտնվող դաշտերում։

Տրայանոս կայսեր զորքերը 114 թ. նվաճել էին Հայաստանը և կայսեր թողած արձանագրության մեջ նշվում է, որ սկյութական IV լեգեոնը 116 թ. ինչ-որ շինություն է կատարել այստեղ[5]։

Երկրորդ արձանագրությունը փորագրված է տապանաքարի վրա, որը շարդված է և հայտնաբերվել է բեկորներով, որոնք մասամբ թերի են։ Տապանաքարը ունեցել է 0,72 մ լայնք և 1,67 մ երկայնք։ Տասը տողանոց արձանագրությունից պահպանվել են առաջին 4 տողերը, իսկ մնացած տողերն անընթեռնելի են։ Արձանագրությունը հետևյալ կերպ է կարդացվում. «Ստորերկրյա աստվածներին (Մանեսին) Կայոս Վալ (Երիոս) Կրե...», զինվոր իտալիկների I լեգեոնի զորաջոկատի, ծառայեց... հուշարձանը//դրվեց»[6]։

Բ. Ն. Առաքելյանը նշում է, որ պարզ չէ, թե ինչ է կառուցել սկյութական IV լեգեոնը։ Դա եղել է տվյալ լեգեոնի ռազմական ամրությունը, զորանոցը, տաճարը, գերեզմանոցը, թե այլ շինություն, դժվար է ասել։

Եվ, իրոք, այն ժամանակ ձեռնարկված փոքր ծավալի պեղման աշխատանքների միջոցով դժվար էր պատասխանել այդ հարցին։ Սակայն այժմ դամբարանների պեղումները թույլ են տալիս ենթադրելու, որ Բ. Ն. Առաքելյանի վերը բերած կարծիքներից հավանականն այն է, թե հայտնաբերված արձանագրություններից մեծը կանգնեցվել է սկյութական IV լեգեոնի կողմից՝ գերեզմանոցում, որտեղ հավանաբար թաղված են եղել Արտաշատը նվաճելիս զոհված հռոմեական, տվյալ դեպքում հայտնաբերված արձանագրություններից մեզ հայտնի, IV սկյութական և իտալիկների I լեգեոնի զինվորները։ Պետք է ենթադրել, որ ընդհանուր գերեզմանոցին վերաբերող և գտնված տապանաքարի արձանագրությունից բացի եղել են նաև արձանագրված այլ տապանաքարեր, որոնք, պետք է հուսալ, որ կհայտնաբերվեն այս

[4] Բ. Ն. Առաքելյան, Լատիներեն արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից, ՊԲՀ, 1967, № 4, էջ 302։

[5] Նույն տեղում, էջ 307 և հտ.։

[6] Նույն տեղում, էջ 309։

տերիտորիայի պեղումներից։ Ճեղքված, կոպիտ քարերով պատրաստված շաղախով հարթեցված սալահատակը նման է Արտաշատի մյուս պամբարանադաշտերում (Փոքր Վեդի և Շիրաղ գյուղի դաշտերում) հայտնաբերված սալահատակ հարթակներին։ Կարելի է ենթադրել, որ դա եղել է կամ հոգեհացի համար պատրաստված հարթակ և կամ մեծ արձանագրության առջև հատուկ պատրաստված սալահատակ։ Թերևս այդ են վկայում նաև ագորիքների քարերը, որոնք հավանաբար շարված են եղել դերեզմանի վրա, ինչպես քաղաքի հարավարևելյան № 24 դամբարանում, նույնպես և խեցեղեն անոթների այն բազմաթիվ բեկորները, որոնք հոգեհացի ժամանակ օգտագործվելուց հետո կոտրատվել ու նետվել են գերեզմանի վրա։

**Դամբարան № 73:** *Հիմնահողային թաղում դիակիզմամբ։ Գտնվել է Փոքր Վեդիի դաշտերում, բլուրներից հյուսիս-արևելք, ճանապարհի կողքին։ Այստեղ հայտնաբերվել են մի քանի խարիսխ՝ նման Շիրաղի և Խորվիրապի բլուրներից հայտնաբերվածներին։ Պեղումներով բացվել են քառանկյուն տաշած մի կրաքար, շաղախի բեկորներ, քարի կողքին կավից պատրաստված հարթակ (մոտ 8 քմ), որի վրա ածխի և մոխրի շերտ կար (30—35 սմ հաստությամբ)։ Դամբարանից և մոխրաշերտի միջից հայտնաբերվել են տարբեր տիպի խեցեղենի շուրջ 000 բեկորներ, այդ թվում խոհանոցային խեցեղենի, գոմաղարդ կճուճների, ջրամանի բեկորներ։*

**Դամբարան № 74:** *Հիմնահողային թաղում։ Կավով սվաղած (երկ. 55 սմ, լայն. 50 սմ, խոր. 20 սմ), վրան ու կողքերին անփույթ շարած քարերով, մանկան թաղում, I բլրի (18B քառ.) հյուսիսարևելյան մասում, պարսպի տակ, ներսից, գլուխը գտնվում էր արևմայան կողմում, դեմքով դեպի արևելք։ Մանկական փիակը թաղված էր կուչ եկած վիճակում, ոսկորները շատ վատ էին պահպանված։ Դամբարանում հայտնաբերվել են ածխի մի քանի կտոր, գանգի հետևում կողքի դրած մի քրեղան, դեմքի առջև՝ երկու փոքրիկ դավաթ, եռատերև պսակով և մի կանթով (տախտ. $V_1$, $X_{1,3}$, նկ. $45_{,2-4}$)։*

**Դամբարան № 75:** *Կարասային թաղում։ Բացվել է Խորվիրապ տանող ճանապարհի կողքին, ջրանցք անցկացնելու ժամանակ։ Կարասը սուր նստուկով էր։ Դամբարանից գտնվել է ապակյա դրեթե դլանաձև երկու շիշ (նկ. $49_{,1,2}$)։*

**Դամբարան № 76:** *Հիմնահողային թաղում VII բլրի վրա (քառ. 5 C, F, խոր. 60 սմ)։ Ոսկորները վատ էին պահպանված, բայց դատելով կողոսկրների դիրքից, կարելի է ենթադրել, որ ուղղությունը եղել է արևելք-արևմուտք, գլուխը արևմտյան կողմում։ Դամբարանի շուրջը մոխրախառը հող էր ոսկորների հետքերով, որի միջից գտնվել է թեփն հաղցրած մի ապարանջան, պատրաստված կլոր լարից և երկաթյա ինչ-որ իրի պոչ (նկ. $44_{,5,6}$)։*

**Դամբարան № 77:** *Կարասային թաղում։ Մանկական, VII բլրի վրա (7a քառակուսի) սենյակի հատակի տակ։ Կարասը գտնվում էր կողքի պառկեցրած վիճակում (բարձր. 38 սմ, պս. տր. 25,5 սմ, հատ. տր. 14 սմ), ուղղությունը հյուսիս-հարավ։ Կարասի բերանը ծածկված էր խոհանոցային անոթի բեկորներով։ Մանկան գլուխը գտնվում էր կարասի բերանի մոտ, դիակը թաղված էր կուչ եկած վիճակում, դեմքով դեպի արևմուտք։ Դիակը*



Նկ. 9. 1—12—դամբ. № 19

*մտցրել էին կարասի բերանը ջարդելուց հետո, ոսկորները շատ վատ էին պահպանված։ Դամբարանում գտնվել են թևին հագցրած բրոնզե, հաստացող ծայրերով մի ապարանջան և աչքերով մի ուլունք (նկ. $44_{9,10,50,5^1}$)։*

Դամբարան № 78։ *Հիմնահողային, մանկական թաղում VIII բլրի հյուսիսային պարսպի տակ, ներսից։ Դամբարանի տակ քարեր էին դրված։ Հանգուցյալը թաղված էր կուչ եկած վիճակում, ծնկները ծալած, գլուխը արևմտյան կողմում, դեմքով դեպի հարավ։ Դամբարանում հայտնաբերվել են կապտավուն բարակ թափանցիկ ապակուց մի սրվակ, ականջօղ և բրոնզե ապարանջան (տախտ. $XX_{,1}$, նկ. $44_{,1,2}$)։*

Դամբարան № 79։ *Թեթևակի փորված ժայռի մեջ (VIII բլուր 5B քառ.), եզրերին մի քանի տձև քարեր շարած, որը արևմտյան հատվածում քիչ նեղանում էր։ Հանգուցյալը թաղված էր աջ կողքի վրա, ծնկները քիչ ծալած վիճակում, գանգը, որը բացակայում էր, եղել է արևմտյան մասում։ Դամբարանում գտնվել է երկու ոսկրե շքասեղ, կրծքի հատվածում՝ գունազարդ կիսագնդաձև մի թաս, մեջը մուգ շագանակագույն խաչի տեսքով, եղևնաձև զարդերով, որոնց միջև դարչնագույն ներկով արված է ծաղկաշղթայաձև զարդ։ Թասի մեջ դրված էր մի կտոր ոսկոր և մի հավի ձու։ Գտնվեցին նաև մարմարե ուլունքներ, մանր, տձև, առանց անցքի, և ոչխարի երկու վեգ՝ մշակված (տախտ. $IX_{,1,8}$, նկ. $34_{,8-11}$)։*

Դամբարան № 80։ *Կարասային թաղում, մանկական, VIII բլրի հյուսիսային պարսպի մոտ։ Փոքր կարասը թուխ էր, գտնվում էր թեք դրված վիճակում (բարձր. 40 սմ), բերանն ուղղված էր դեպի հարավ։ Կմախքը վատ էր պահպանված, դիրքը պարզել հնարավոր չեղավ։ Կճուճի կողքին գտնվեց մի կանթանի սափոր, միջից բրոնզե շրջանաձև փոքր հայելի և ապակե մի կնիք, մի կողմը ուռուցիկ, վրան՝ ձիու պատկերով (նկ. $49_{,6,7}$)։*

Դամբարան № 81։ *Հիմնահողային, VIII բլրի հյուսիսային պարսպի մոտ, ներսից (38F քառ., խոր. 70 սմ)։ 12—15 տարեկան երեխայի թաղում աջ կողքի վրա, կուչ եկած, ծնկները ծալած վիճակում, գլուխը արևելյան կողմում, դեմքով դեպի հյուսիս։ Դամբարանից գտնվել է չնարակած թասի մի շուրթ, սրաքար, կախելու անցքով, բարակ երկաթյա մի լար և խոհանոցային մի կճուճ (նկ. $50_{,3,5,6}$)։*

Դամբարան № 82։ *Կարասային թաղում, VIII բլրի վրա, հյուսիսային պարսպի մոտ, ուղղությունը արևելք-արևմուտք։ Կարասի բերանը արևմտյան կողմում։ Կարասն ուներ սուր նստուկ, կլոր պսակ (բարձր. 105 սմ, պսակի տր. 35 սմ, նստ. տր. 7 սմ)։ Դիակը մտցրել էին կարասի ուսը ջարդելուց հետո։ Հանգուցյալը թաղված էր կուչ եկած, ծնկները ծալած վիճակում, գլուխը արևմտյան մասում, դեմքով դեպի արևելք։ Ձեռքերը գտնվում էին կրծքի մոտ, ձախ ձեռքի մատին կար արծաթե մի մատանի, ապակե օվալաձև ակով, որի հետքերն էին պահպանվել միայն։ Կարասի միջից, հանգուցյալի դեմքի մոտից, գտնվեց նաև ապակյա երկու սրվակ (մեկը թերի) ուռուցիկ, քիչ սեղմված իրանով, գավաթ, օղակաձև ոտքով՝ վերից վար ակոսավոր մի կանթով, կարմիր ներկած, փայլեցրած, և մի պնակ օղակաձև ոտքով, կարմիր անգոբով շրջանաձև փայլեցումով և գունազարդ մի բեկոր, ինչպես նաև երկու*



Նկ. 10. 1—10—դամբ. № 19

*հռոմեական դրամ, մեկը Տրայանոս կայսրինը, երկրորդը վատ է պահպանված։ Կարասի դրսի մասում, բերանի մոտ գտնվեց ներմուծված, գլանաձև զույգ կանթերով մի ամֆորա, հատակի մոտ զնգաձև իրանով միկանթանի սափոր (տախտ.* XIII$_{1}$, XVI$_{1-5}$, XIX$_{3}$, *նկ. 50*$_{3}$, *51*$_{1-9}$)։

*Մեծ բլուրներից արևմուտք, ճահճուտի մեջ գտնվող ցածր բլրի լանջին հայտնաբերվել է երկու դամբարան, որոնցից մեկը բնակիչների կողմից ավերվել էր։*

**Դամբարան № 83:** *Փոքր քարանձավի մեջ կատարված թաղում, ավերված։ Գտնվել է կավե ձվաձև մի անոթ (վիզը թերի, տախտ. XVIII*$_{1}$)։

**Դամբարան № 84:** *Ժայռափոր, պատերից երկուսը՝ հյուսիսայինը և արևմտայանը հարթեցված ժայռն էր, իսկ հարավայինը և արևելյանը շարված են չարդած մեծ քարերով։ Դամբարանը ծածկված էր երեք խոշոր տձև քարերով։ Դամբարանի ուղղությունը արևմուտք-արևելք է (երկ. 150 սմ, լայն. 65 սմ, խոր. 85 սմ)։ Կմախքը լրիվ քայքայված էր, ուստի հնարավոր չեղավ նրա դիրքը պարզել։ Գանվեցին միայն գանգի ու կողոսկրների որոշ մնացորդներ։ Արևմայան հատվածում, որտեղ գանգն էր, հայտնաբերվեց թղթի նման բարակ ոսկյա թերթերի մասեր, շրթերը ծածկելու ոսկե թիթեղ, կանացի գլխով ոսկյա երկու ականջօղ, փայտե գագաղի մասեր, բրոնզե շրջանաձև հայելի և երկու դրամ, մեկը արծաթյա, մյուսը պղնձյա։ Առաջինը պարթևական թագավոր Հրահատ III-ի դրախման է (մ. թ. ա. 75—57), մյուսը, որը վատ է պահպանվել, Տիգրան II-ինն է (տախտ. VI*$_{5}$, XXI$_{1-3,6-8}$, *նկ. 52*$_{1-7,9}$)։

**Դամբարան.** *Կարասային թաղում, բացվել է բլուրների հարավային ծայրին, քարհանքի մոտ։ Սուր նստուկով ուռուցիկ կարաս (բարձր. 105 սմ, պս. տր. 40 սմ, նստ. տր. 10 սմ), թեք պառկեցրած դիրքով։ Ուղղությունը հարավհյուսիս, կարասի բերանը հյուսիսային կողմում։ Դիակը թաղված էր կուչ եկած վիճակում, գլուխը կարասի բերանի մոտ, ոսկորները շատ վատ էին պահպանվել, մեջը ոչինչ չկար, բացի ոչխարի երկու վեգից։*

*Քարհանքի բանվորների վկայությամբ նրանք այս տերիտորիայում քանդել են մեծ քանակությամբ կարասային թաղումներ, որոնց միջից դուրս են եկել ապակյա սրվակներ և ուլունքներ։ Մեզ հանձնվեց նաև օծանելիքի համար օգտագործվող մի փոքրիկ կարմիր պուլիկ, շատ նման թաղումներից հայտնաբերված մյուս պուլիկներին։ Ամբողջ շրջապատում, մեծ տարածության վրա, մոխրի, կրակի և ոսկորների մնացորդներ են նկատվում։*